Կազմված է _____ 202__թ.
Բաղկացած է 2 թերթից
Ընդամենը __ օրինակ
ՕՐԻՆԱԿ __

հավելված 10
ՀՀ արդարադատության նախարարի
2020 թվականի ապրիլի 30-ի
N 66-Ն հրամանի

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԲՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ
հիմնադիրների (միակ հիմնադրի)
«-----» «----------» 20____թ. կայացած
(կայացրած) հիմնադիր ժողովի որոշմամբ
(միանձնյա որոշմամբ) արձանագրություն
(որոշում) թիվ _____ տնօրեն՝
Գործադիր տնօրեն՝ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄՈՎՍԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ

«_____» «_____» 20____թ.

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀՀ արդարադատության
նախարարության իրավաբանական
անձանց պետական ռեգիստրի կողմից
2001-07-30
գրանցման N 273.120.03023
ՀՎՀՀ 01540062
աշխատակից՝ _____

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԲՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ»

Փակ բաժնետիրական ընկերության

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԲՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» Փակ բաժնետիրական ընկերությունը համարվում է շահույթ ստանալու նպատակով հիմնադրված առեւտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձ:
2. Ընկերությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրությամբ, այլ իրավական ակտերով եւ սույն կանոնադրությամբ:
3. Ընկերության ֆիրմային անվանումն է՝
հայերեն լրիվ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԲՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» Փակ բաժնետիրական ընկերություն
կրճատ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԲՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ
ռուսերեն լրիվ՝ Закрытое Акционерное Общество
կրճատ՝ ЗАО
անգլերեն լրիվ՝ Closed Joint Stock Company
կրճատ՝ CJSC
4. Ընկերության գտնվելու վայրն է՝ ՀՈՎՍԵՓՅԱՆ Փ. / 26, ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ 0047, ԵՐԵՎԱՆ, ԵՐԵՎԱՆ

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ

5. Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է **1,213,057,590** դրամ, որը կազմում է **11410569** հատ հասարակ (սովորակ) անվանական բաժնետոմս,մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է՝ **106.31** դրամ:
Բոլոր բաժնետոմսերը տեղաբաշխված են բաժնետերերի միջև և լրիվ վճարված են նրանց կողմից:
6. Ընկերությունում ստեղծված է պահուստային հիմնադրամ կանոնադրական կապիտալի 15 տոկոսի չափով:

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԸ

7. Ընկերության յուրաքանչյուր սովորական բաժնետոմս տալիս է իր սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջը միևնույն իրավունքները:
8. Սովորական բաժնետոմսի սեփականատեր հանդիսացող բաժնետերը մեկամսյա ժամկետում առաջնահերթ կարգով իրավունք ունի ձեռք բերել ընկերության կողմից տեղաբաշխվող բաժնետոմսերն օրենքով սահմանված կարգով:
9. Ընկերության բաժնետերն իրավունք ունի իր բաժնետոմսերը օտարել ընկերության մեկ կամ մի քանի բաժնետերերի, ինչպես նաև երրորդ անձանց: Ընդ որում, մյուս բաժնետերերն ունեն այդ բաժնետոմսերը նույն գնով ձեռքբերման նախապատվության իրավունք՝ ընկերության կանոնադրական կապիտալում իրենց բաժնետոմսերին համամասնորեն: Եթե ընկերության մյուս բաժնետերերը չեն օգտագործել բաժնետոմսերը գնելու իրենց նախապատվության իրավունքը կամ այն օգտագործել են մասամբ, ապա ընկերությունն ունի այդ բաժնետոմսերը նույն գնով ձեռքբերման նախապատվության իրավունք:
10. Երրորդ անձանց օտարման անհնարինության դեպքում բաժնետիրոջ պահանջով ընկերությունն ինքը պարտավոր է ձեռք բերել բաժնետիրոջ բաժնետոմսերը, այն իրացնել մեկ տարվա ընթացքում այլ բաժնետերերի կամ երրորդ անձանց կամ որոշում ընդունել ընկերությանը պատկանող բաժնետոմսերի մարման ճանապարհով ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցման մասին:
11. Նախապատվության իրավունքի (այլ բաժնետերերի կողմից վաճառվող բաժնետոմսերի ձեռքբերման) իրականացման ժամկետը սահմանվում է մեկ ամիս:

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

12. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովն ընկերության կառավարման բարձրագույն մարմինն է: Տարեկան ժողովը գումարվում է հերթական ֆինանսական տարվա ավարտից հետո 6 ամսվա ընթացքում: Ընկերությունը պարտավոր է տարեկան և արտահերթ ընդհանուր ժողովների գումարման մասին իր բաժնետերերին օրենքով սահմանված կարգով ծանուցել ժողովի գումարման օրվանից առնվազն 5 օր առաջ:
13. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի իրավասությունները և որոշումներ ընդունելու կարգը սահմանվում են «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:
14. Ընկերությունում տնօրենների խորհուրդ չի ձևավորվում:
15. Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է ընկերության տնօրենը, որը գործում է «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված իր իրավասությունների շրջանակներում, ինչպես նաև իրականացնում է նույն օրենքի 84-րդ հոդվածի 1-ին մասի «բ-դ» ենթակետերով սահմանված իրավասությունները:

Հավելված 11
ՀՀ արդարադատության նախարարի
2020 թվականի ապրիլի 30-ի
N 66-Ն հրամանի

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԲՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ»
Փակ բաժնետիրական ընկերության
ՀԻՄՆԱԴՐԻ ՈՐՈՇՈՒՄ թիվ 1

Կազմված է 2001-07-30 և բաղկացած է 1 (մեկ) էջից

ք. ԵՐԵՎԱՆ 2001-07-30

Ես՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԲՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» Փակ բաժնետիրական ընկերության հիմնադիր ՀՀ Կառավարություն-ս ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով,

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. հիմնադրել «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԲՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» անվանումով «Փակ բաժնետիրական ընկերություն» կազմակերպաիրավական ձևի առևտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձ, որի ստեղծման նպատակն է տնտեսական գործունեություն իրականացնելու ճանապարհով շահույթի ստացումը
2. ընկերության գործունեության ժամկետը չսահմանափակել,
3. հաստատել ընկերության բաժնետոմսերի տեղաբաշխման արդյունքները,
4. ընկերության կանոնադրական կապիտալի չափը սահմանել 1,213,057,590 դրամ, որը բաժանվում է 11410569 հատ հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսերի, յուրաքանչյուրը 106.31 դրամ անվանական արժեքով,
5. ոչ մի տեսակի արտոնյալ բաժնետոմսեր չթողարկել,
6. հաստատել «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԲՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ կանոնադրությունը,
7. սահմանել, որ՝
● ընկերության խորհուրդ չի ձևավորվում,
● ընկերության խորհրդի, ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովների գումարման և դրանց օրակարգի հաստատման լիազորությունները կատարում է ընկերության տնօրենը,
8. ընկերության տնօրեն հաստատել ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄՈՎՍԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ-ին, անձնագիր [redacted] կողմից, հասցե՝ [redacted], նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր 3 տարի ժամկետով:

Ընկերության հիմնադիր՝ ՀՀ Կառավարություն

Տպագրված է ընդամենը 3 օրինակից
ՕՐԻՆԱԿ 1

.Կազմված է «15» հուլիսի 2021թ.
Բաղկացած է 2 /երկու/ էջից

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Հանրային հեռարձակողի խորհրդի՝ 30 հունիս 2021թ. № 42-Լ որոշմամբ

Գործադիր տնօրեն՝ Հ. Մովսիսյան

«15» հուլիսի 2021թ.

Գ Ր Ա Ն Ց Վ Ա Ծ Է
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ
ԿՈՂՄԻՑ 30.07.2001թ.
գրանցման համար՝ 273.120.03023
ՀՎՀՀ՝ 01540062
30.09.2009թ. գրանցված կանոնադրության
թիվ ____ __ փոփոխությունը գրանցված է
իրավաբանական անձանց
պետական ռեգիստրի կողմից
____ __ 20__

աշխատակից՝

________________ ________________

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

(ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ)

Երևան 2021 թ.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» փակ բաժնետիրական ընկերության /հետագայում Ընկերություն/ կանոնադրությունում կատարել հետևյալ փոփոխությունները.

Կանոնադրության 4.1. կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«4.1. Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 1,694,657,092.72 (մեկ միլիարդ վեց հարյուր իննսունչորս միլիոն վեց հարյուր հիսունյոթ հազար իննսուներկու ամբողջ յոթանասուներկու հարյուրերորդական) ՀՀ դրամ: Այն բաժանված է 15,940,712 (տասնհինգ միլիոն ինը հարյուր քառասուն հազար յոթ հարյուր տասներկու) հատ սովորական բաժնետոմսի, յուրաքանչյուրը՝ 106.31 (մեկ հարյուր վեց ամբողջ երեսունմեկ հարյուրերորդական) ՀՀ դրամ անվանական արժեքով:»

Սույն փոփոխությունը հանդիսանում է «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության անբաժանելի մասը: